ՀԱՅԿԱԿԱՆ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՊԱՏՄԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՈՒ ԴԵՄՈԳՐԱՖԻԿ ԳՈՐԾՈՆՆԵՐԸ*

Մ. Մ. ՀԱՍՐԱԹՅԱՆ

Հայկական լեռնաշխարհն իր դիրքով առանձնահատուկ տեղ է գրավում. այն Արևելքը և Արևմուտքը կապող օղակ է եղել հնում, դրանց տնտեսական և մշակութային կապերն իրականացնող կամուրջ։ Այդպիսի դիրքը հայ ժողովրդի պատմության մեջ կարևոր ղեր է խաղացել՝ ինչպես դրական, այնպես էլ բացասական։ Դրականը սկզբում հելլենիստական, հետո քրիստոնյա աշխարհի բաղկացուցիչ մասը լինելն էր, հաղորդակցվելը Արևմուտքի քաղաքակրթությանը՝ պահպանելով միաժամանակ իր մշակույթում արևելյան արմատները։ Այս գործոնները նպաստեցին Հայաստանի հատկապես արվեստի, գրականության, ճարտարապետության զարգացմանը։ Ստեղծագործաբար յուրացնելով այդ բնագավառներում Արևելքի և Արևմուտքի նվաճումները, հայ ժողովուրդը ստեղծեց իր ինքնատիպ ազգային մշակույթը, իր հերթին հարևաններին փոխանցելով սեփական նվաճումները։

Սակայն Հայաստանի աշխարհագրական դիրքը նաև ճակատագրական ղեր է խաղացել հայ ժողովրդի պատմության մեջ։ Պետք է նշել, որ աշխարհագրական գործոնը սովետական պատմագրության կողմից անտեսվել է՝ միաժամանակ թերագնահատվելով նաև հայ մշակույթի պատմության մեջ։ Իսկ իրականությունն այն է, որ Հայաստանը, գտնվելով Արևմուտքի և Արևելքի հզոր պետությունների միջև, մ. թ. ա. առաջին հազարամյակից մինչև XIX դարը եղել է նրանց էքսպանսիայի օբյեկտ, իսկ անկախության կորստից հետո՝ նաև այդ երկրների միմյանց դեմ մղվող պատերազմների թատերաբեմ։ Հայաստանը, այսպես ասած, միշտ գտնվել է «մուրճի և զնդանի» միջև՝ Հին Հռոմի և Պարթևստանի, Բյուզանդիայի և Սասանյան Պարսկաստանի, ավելի ուշ՝ Թուրքիայի և Իրանի և այլն։ Այդ պատերազմները կործանարար են եղել երկրի ինչպես տնտեսության, այնպես էլ մշակույթի և հատկապես ճարտարապետության համար։ Իր պատմության վերջին երեք հազարամյակների ընթացքում Հայաստանում անկախ պետականություն և համեմատաբար խաղաղ ստեղծագործելու հնարավորություն է եղել նշված ժամանակաշրջանի կեսից էլ պակաս ժամանակահատվածում։

Իսկ եթե նկատի ունենանք, որ անկախ պետականության տարիներին Հայաստանը նաև երկարատև պայքար է մղել տարբեր նվաճողների դեմ գոյությունը պահպանելու համար, ապա խաղաղ կյանքի, շինարարության համար հայ ժողովուրդն ունեցել է ընդամենը մի քանի հարյուրամյակ։ Հայաստան են ներխուժել և իրենց տիրապետությունը հաստատել նաև արաբները, սելջուկ-Թուրքերը, թաթար-մոնղոլները։ Հայ ժողովրդի բազմադարյան պատմության մեջ ողբերգականը և ճակատագրականը եղան Թուրքական ցեղերի արշավանքները և տիրապետությունը։ Եթե մյուս բոլոր նվաճողների (հռոմեացի կամ բյուզանդացի, պարսիկ թե արաբ)

---

* *Զեկուցումը կարդացվել է 1990 թ. ապրիլի 12—14-ը Սարասբուրգում (Ֆրանսիա) կայացած հայկական ճարտարապետական ժառանգության պահպանությանը նվիրված միջազգային դիտաժողովում։*

տիրապետության ժամանակ, այն էլ նույնիսկ երկարատև, Հայաստանի էթնիկ կազմը չխախտվեց, ապա թուրքական քոչվոր ցեղերը Փոքր Ասիա և Կովկաս թափանցելուց հետո դարձան այս ռեգիոնի մնայուն բնակիչ։ Հայկական լեռնաշխարհի բնակչությունը, մինչև XII դարը, իր ճնշող մեծամասնությամբ (իսկ գյուղերում՝ ամբողջությամբ) բաղկացած էր հայերից։ Մինչդեռ XII—XVII դդ., ալիք առ ալիք Հայաստան ներխուժած թուրքական ցեղերը փոխեցին երկրի դեմոգրաֆիկ վիճակը, գրավելով և հաստատվելով ամենաբարենպաստ վայրերում, պատերազմների հետևանքով դատարկված բնակավայրերում։ Շատ դեպքերում իրենք՝ նվաճողները, հրկիզումներով և թալաններով ստիպում էին հայ բնակչությանը լքել և հեռանալ գյուղերից։ Այս է պատճառը, որ Խորհրդային Հայաստանի թուրք-ազերիներով բնակված բոլոր գյուղերում կարելի էր հանդիպել վաղ միջնադարից մինչև XVII դարով թվագրվող եկեղեցիներ և վանքեր։ Միաժամանակ օտար նվաճողները, հաստատվելով հայկական բնակավայրերում, փոխում էին բնակավայրերի անունները՝ դրանք թուրքացնելով։ Օրբելյանների օրոք Սյունյաց իշխանության կենտրոն Եղեգիսը, որը հարուստ է տասնյակ արժեքավոր ճարտարապետական հուշարձաններով (դրանց թվում եզակի հորինվածքով Ջորաց եկեղեցին) դարձավ Ալայազ, Արատեսը՝ Կղզյուլ, Արտավաղավանքը՝ Թաքյառլու և այլն։ Միայն 1988—89 թթ. Խորհրդային Հայաստանի տարածքի հարյուրավոր բնակավայրեր նորից դարձան հայաբնակ և այժմ մնում է վերականգնել նրանց պատմական անունները։

Միջնադարում հայ ազգաբնակչության՝ իր պատմական բնակավայրերից զանգվածային տեղահանման ցայտուն օրինակ է Սեֆյան Իրանի տիրակալ Շահ-Աբասի կողմից 1604 թ. Արևելյան Հայաստանից դեպի Իրանի խորքերը 300 000 հայերի բռնի տեղափոխելը։ Տեղահան արվեցին Արարատյան նահանգի, Նախիջևանի, Գողթան, Երնջակ գավառների բնակչությունը, իսպառ դատարկվեց 20 հազար բնակիչ ունեցող Ջուղա քաղաքը, որը եռանդուն առևտրական կապերի մեջ էր Եվրոպայի և Ասիայի երկրների հետ։ Հայկական բնակավայրերը ամայացան, որից և օգտվելով, այնտեղ բնակություն հաստատեց թուրքական և քրդական տարրը։

Սակայն պատմական Հայաստանը հայ բնակչությունից զրկելու և նրան ֆիզիկապես ոչնչացնելու պետականորեն ծրագրված ակտը իրականացվեց 1915թ., երբ տեղի ունեցավ XX դարի առաջին ցեղասպանությունը. Թուրքիայի տարածքում բնաջնջվեց 1,5 միլիոն հայ, իսկ մնացածը արտագաղթեց Անդրկովկաս և Ռուսաստան, Մերձավոր Արևելք, Եվրոպա և Ամերիկա։

Հայ ճարտարապետության պատմությունը սերտորեն կապված է Հայաստանի պատմության հետ։ Այն բոլոր արհավիրքները, որոնք կրել է հայ ժողովուրդը, անմիջականորեն անդրադարձել են հայ ճարտարապետության զարգացման ընթացքի վրա։ Պետականության կորուստը, թշնամիների ներխուժումը, երկրի մասնատումը տարբեր պետությունների կողմից, բնակչության տեղահանումը իրենց կնիքն են թողել հայ ճարտարապետության վրա։

Վաղ միջնադարից սկսած, երբ ձևավորվեց հայկական ազգային ճարտարապետությունը, մինչև XIX դարը նրա պատմությունը բաժանվում է երեք շրջանի, և այդ բաժանումը պայմանավորվում է երկրի պատմությամբ։ Առաջին շրջանը՝ IV—VII դդ., հայ ճարտարապետության դասական շրջանն էր, երբ ձևավորվեց նրա ազգային ոճը, ինչպես ասում են՝ «ազգային դեմքը», ստեղծվեցին այն բոլոր ճարտարապետական տիպերը, որոնք կիրառվեցին հետագայում ինչպես Հայաստանում, այնպես էլ նրա սահմաններից դուրս։

Այս շրջանն սկսվում է IV դարից, երբ Հայաստանն աշխարհում առաջինը դարձավ պետական կրոն ընդունեց քրիստոնեությունը, և ավարտվում է VII դարի վերջով, երբ երկրում հաստատվեց արաբական տիրապետությունը։ Այս չորս դարերի ընթացքում ձևավորվեց ինքնատիպ հայկական ճարտարապե-

տությունը, որը հենվում էր ուրարտական և հելլենիստական շինարարական արվեստի ավանդների վրա։ Հայաստանի և Ասորիքի կրոնական սերտ կապերը, որոնց նպաստում էր այդ երկրների հարևանությունը, զուգակցվեցին ասորական ճարտարապետության որոշ հորինվածքային և դեկորատիվ ձևերի ազդեցությամբ, որը տևեց մինչև V դարի վերջը։ Ինքնուրույն, ազգային կրոնական ճարտարապետության ձևավորմանը Հայաստանում նպաստեց հայ եկեղեցու անկախությունը. այն ավտոկեֆալ դարձավ 372 թ., իսկ 506 թ. Դվինի ժողովում մերժեց Քաղկեդոնի ժողովի դավանանքը, որը հանգեցրեց Բյուզանդիայի և նրա եկեղեցու հետ կապերի խզմանը։ Սա դրական մեծ ազդեցություն ունեցավ հայ ճարտարապետության զարգացման վրա։ VI—VII դդ. այն մի իսկական թռիչք ունեցավ, որն այդ ժամանակաշրջանում քրիստոնեական աշխարհի այլ երկրներում չի հանդիպում։ Վաղ միջնադարում հայ ճարտարապետությանը եկեղեցական շենքերի տիպարանությամբ և դեկորով մոտ է միայն հարևան Վրաստանի շինարարական արվեստը, որը բացատրվում է սերտ քաղաքական և կրոնական կապերով, ճարտարապետների անմիջական ստեղծագործական շփումներով, բնական նման պայմաններով ու շինանյութերով և այլն։

VI—VII դդ. հայ ճարտարապետությունը մշակեց մի շարք շենքերի տիպեր, որոնք եղան նրա ավանդը վաղ քրիստոնեական արվեստում։ Դրանք են՝ «գմբեթավոր դահլիճը», կողային էքսեդրաներով գմբեթավոր բազիլիկան, ներդծված խաչը չորս մույթերով և, առաջին հերթին, կենտրոնական կառուցվածքների մի ամբողջ ինքնատիպ շարք. տետրակոնխ անկյունային խորշերով, տետրակոնխը քառակուսու վրա (Մաստարայի տիպը), տետրակոնխը քառակուսու վրա չորս գմբեթակիր մույթերով (Էջմիածին—Բագարանի տիպը), որը տարածվեց երկրի սահմաններից դուրս։ Իսկ այն դեպքում, երբ կիրառվում էր արդեն հայտնի սխեմա, ապա Հայաստանում այն մեկնաբանում էին յուրովի, զարգացնելով և մշակելով (ինչպես, օրինակ, Զվարթնոցի տաճարը)։

Արաբական լուծը ծանր հետևանքներ ունեցավ Հայաստանի ոչ միայն տնտեսության, այլև մշակույթի վրա։ Երկու դար շարունակ երկրում կանգ առավ շինարարական կյանքը, չկառուցվեց ոչ մի մոնումենտալ շենք, եղածների մի մասն ավերվեց։ Այդ է պատճառը, որ ազգային ճարտարապետության պատմության երկրորդ շրջանը սկսվում է ոչ թե VIII դարից, այլ IX դարի վերջից և տևում մինչև XIV դարը։

885 թ. Հայաստանն անկախություն ձեռք բերեց, և Աշոտ Բագրատունին դարձավ թագավոր։ Երկրի մայրաքաղաքները հաջորդաբար եղան Բաղարանը, Շիրակավանը, Կարսը և 961 թ.՝ Անին։ Բայց երկրի տնտեսական և քաղաքական մասնատվածությունը և խոշոր ֆեոդալների անջատողական ձգտումները խանգարեցին ողջ երկիրը միասնական պետության մեջ միավորելուն և X դարում Հայաստանում ստեղծվեցին մի քանի վասալ թագավորություններ՝ Վասպուրականում, Վանանդում, Սյունիքում, Լոռիում։ Երկրի այս մասնատվածությունը իր հերթին հանգեցրեց առանձին ճարտարապետական դպրոցների ստեղծմանը։ Մեծ դեր խաղաց Անիի դպրոցը, որը X դարից սկսած դարձավ առաջատար, և մայրաքաղաքում մշակված ոճական ուղղությունը տարածվեց երկրի բոլոր նահանգներում։ Անիի դպրոցի նվաճումները կապված են միջնադարյան Հայաստանի խոշորագույն ճարտարապետ Տրդատի հետ։ Իր նշանակությամբ հաջորդ դպրոցը Սյունիքինն էր, որտեղ ճարտարապետական զարթոնքը տեղի ունեցավ մյուսներից ավելի վաղ, և այդտեղ եկեղեցական շենքերի հետաքրքրական տիպեր մշակվեցին։ Վասպուրականի ճարտարապետության գլուխգործոցը համարվում է Մանուել ճարտարապետի կերտած Աղթամարի Ս. Խաչ եկեղեցին (X դար), որը ճակատների քանդակների հագեցվածությամբ և աշխարհիկ թեմատիկայի գերակշռությամբ եզակի է միջնադարյան Հայաստանի արվեստում։ Լոռու ճարտարապետական դպրոցը աչքի է ընկնում վանական համալիրների առա-

տությամբ, աշխարհիկ շենքերի բազմազանությամբ (ակադեմիա, դպրոց, գրադարան և գրչատուն, սեղանատուն, արտադրական շենքեր և այլն)։ XIII դարում ճարտարապետական դպրոց ձևավորվեց նաև Արցախում, որտեղ հզորացավ Խաչենի հայկական իշխանությունը։ Արցախի դպրոցի գլխադործոցները հիմնականում կենտրոնացված են վանական համալիրներում. այդ շարքում առանձնանում է Գանձասարը, որը իրավամբ կոչվում է «XIII դարի հայկական ճարտարապետության հանրագիտարան»։

X—XI դդ. Հայաստանում ձևավորվեց կառույցի մի նոր տիպ՝ գավիթը կամ ժամատունը, որը կցվում էր եկեղեցիներին հիմնականում արևմուտքից։ Նրանց առաջացումը պայմանավորված էր հայ եկեղեցու այն կանոնով, որով արգելվում էր եկեղեցական շենքի ներսում թաղումներ կատարել։ Գավիթները դամբարանի դեր էին խաղում, միաժամանակ հավատացյալների համար լրացուցիչ տեղ, ինչպես նաև ժողովատեղ էին ծառայում։

Հայաստանի աշխարհագրական դիրքը՝ Արևելքը և Արևմուտքը, Հյուսիսը և Հարավը կապող առևտրական տարանցիկ ճանապարհների վրա որպես մի խաչմերուկ, ինչպես նաև հայ վաճառականների աշխույժ առևտուրը միջնադարում հարևան և հեռավոր երկրների հետ, կարավանատների և կամուրջների բուռն շինարարության խթան հանդիսացան։ Իրենց ճարտարապետությամբ առանձնանում են Արուճի, Զորի, Թալինի, Սուլեմայի քարավանատները, Արաքսի, Ախուրյանի, Դեբեդի վրա կառուցված կամուրջները։ X—XI դդ. իր զարգացումն ունեցավ ֆորտիֆիկացիոն արվեստը՝ Շիրակում, Սյունիքում, հետագայում հայկական Կիլիկիայում։ Դա շինարարական արվեստի այն բնագավառն է, որի համար անհրաժեշտ ու պարտադիր պայման էր երկրի անկախությունը։

Հայ ճարտարապետության պատմության երկրորդ շրջանը ավարտվում է XIV դարում, երբ ընկավ Կիլիկիայի հայկական թագավորությունը, իսկ բուն Հայաստանը ենթարկվեց Լենկթեմուրի կործանարար արշավանքներին։ XIV դարում վերացան և պատմության ասպարեզից դուրս եկան նաև հայկական վերջին կիսանկախ իշխանությունները։ Օրբելյանների իշխանության վերացումով վերջ դրվեց նաև Վայոց ձորի քանդակագործական դպրոցին, որի լավագույն ստեղծագործությունները կապված էին այն ժամանակաշրջանի հայ խոշոր ստեղծագործողի՝ քանդակագործ, նկարիչ և ճարտարապետ Մոմիկի անվան հետ։

XIV դարից հետո հայկական ճարտարապետության պատմության մեջ ընդմիջումը տևեց ամբողջ երեք դար՝ մինչև XVII դարը։ XV դարում Հայաստանը դարձել էր աղ-կոյունլու և կարա-կոյունլու թուրքմենական ցեղերի միմյանց դեմ մղվող անընդհատ կռիվների, իսկ XVI դարում՝ Օսմանյան Թուրքիայի և Իրանի միջև մղվող պատերազմների թատերաբեմ։ Նորից երկրի աշխարհագրական դիրքը՝ արևելյան երկու բռնապետությունների միջև, ճակատագրական եղավ նրա թե՛ տնտեսության, թե՛ մշակույթի համար։ Մեծապես վնասվեցին արվեստի ու ճարտարապետության կոթողները, ավերվեցին եկեղեցիները և վանքերը։ Միայն XVII դարում, երբ 1612 թ. Թուրքիան և Իրանը հաշտություն կնքեցին, համեմատաբար նպաստավոր պայմաններ ստեղծվեցին տնտեսության վերելքի, շինարարական աշխատանքների վերականգնման համար։ Հայ ճարտարապետության պատմության երրորդ շրջանը՝ XVII—XVIII դդ., իր նվաճումներով չի կարող համեմատվել նախորդ շրջանների հետ։ Հայ ժողովուրդը կարճատև ժամանակ ունեցավ՝ ավերվածը վերականգնելու և նոր կառուցումներ անելու համար։ Սակայն երկարատև ընդմիջման հետևանքով կորսվել էին շինարարական շատ ավանդներ, որը և բացասաբար ազդեց այդ ժամանակաշրջանի հայ ճարտարապետության ընդհանուր մակարդակի վրա։

Այդ իսկ պատճառով եկեղեցիների մասսայական շինարարության համար օգտագործվեցին պարզ ֆորմավածքներ՝ միանավ և եռանավ բազիլիկաներ։ Նախիջևանի տարածքում՝ Հայաստանի պատմական Դողթան և Երևն-

ջակ գավառներում XVII դարում ձևավորվեց հայ ճարտարապետության ինքնատիպ դպրոց, որի առանձնահատկություններից են գմբեթավոր բազիլիկայի հորինվածքի լայն կիրառումը, գմբեթներն աղյուսից, իսկ շենքի հիմնական ծավալը քարից կառուցելը, ներսից բազմանիստ աբսիդի իրականացումը և այլն։ Երկրի անկախության կորուստը XVII դարի ճարտարապետության վրա ունեցավ նաև մի ուշագրավ հետևանք՝ պետականության բացակայության դեպքում, երբ հայերը բերդեր կառուցելու հնարավորություն և իրավունք չունեին, վերջիններին փոխարինեցին վանքերը, որոնք ստեղծվում էին երկու տարբեր ճարտարապետական օրգանիզմների՝ կրոնական և պաշտպանական կառուցվածքների յուրօրինակ սինթեզով։

Հայ ժողովրդի ուշ միջնադարի պատմության ողբերգական բնույթն է պատճառը, որ մասնատված լինելով և կրելով Արևելքի երկու հետամնաց բռնապետությունների՝ Թուրքիայի և Իրանի լուծը, հայ ճարտարապետության պատմության մեջ միջնադարյան շրջանը շարունակվեց մինչև XVIII դարը ներառյալ։ Եվ այդ այն դեպքում, երբ IV դարից մինչև XIV դարը հայ ճարտարապետությունը քրիստոնեական աշխարհում աչքի էր ընկնում իր զարգացման բարձր մակարդակով, ինքնատիպությամբ ու նորարարական լուծումներով։ Իսկ այնուհետև մոտ կես հազարամյակ հայկական շինարարական արվեստը անկում ապրեց և միայն XIX դարի սկզբում Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միանալուց հետո հնարավորություն ստեղծվեց հաղորդակից լինելու նոր դարաշրջանի առաջադեմ քաղաքաշինությանը և ճարտարապետությանը։ XIX դարից սկսած հայ ճարտարապետությունը զարգացավ արդեն միայն Կովկասյան ռեգիոնի տարածքում (Արևելյան Հայաստան, Թբիլիսի, Բաքու, Հյուսիսային Կովկաս) և դարձավ համակովկասյան մշակույթի բաղկացուցիչ կարևոր մասը։

XIX դարի երկրորդ կեսից հայկական առևտրական և արդյունաբերական կապիտալը կենտրոնացված էր հիմնականում Թբիլիսի և Բաքու քաղաքներում։ Դրա հետևանքով հայ հարուստները մեծ ներդրումներ կատարեցին այդ երկու քաղաքների տնտեսության, արդյունաբերության զարգացման, քաղաքաշինության մեջ։ Բաքու և Թբիլիսի քաղաքներում XIX—XX դդ. աշխատում էին մի շարք հայ ճարտարապետներ, որոնց նախագծերով այդտեղ կառուցվեցին բազմաթիվ բնակելի և հասարակական շենքեր։ Նրանցից միայն մեկի՝ Գաբրիել Տեր-Միքելյանի գործունեությունն արդեն ակնառու ցույց է տալիս հայ համայնքի մեծ ներդրումը Կովկասի այդ երկու խոշորագույն քաղաքների կառուցապատման գործում։ Այսպես, օրինակ, XIX դարի վերջում և XX դարի սկզբում նրա նախագծերով են կառուցվել Բաքվում՝ ծննդատան, առևտրական բանկի, համերգային դահլիճի շենքերը, բնակելի տներ, բանվորական ավան, Թբիլիսիում՝ «Մաժեստիկ» հյուրանոցը, արդյունաբերական ցուցահանդեսի տաղավարը, բնակելի, եկամտաբեր տներ և այլն։

Հայ ժողովրդի պատմության առանձնահատկություններից մեկը, որի հետ սերտորեն կապված է ճարտարապետության պատմությունը, վաղ միջնադարից սկսված մասսայական արտագաղթերն են և Եվրոպայի, Աֆրիկայի, Ասիայի տարբեր երկրներում հայկական գաղութների ստեղծումը։ Խոշոր արտագաղթեր տեղի ունեցան Անիի թագավորության անկումից (XI դար) և Կիլիկյան հայկական պետության վերացումից (XIV դար) հետո, ապա՝ սելջուկ-թուրքերի, թաթար-մոնղոլների ասպատակությունների և ավերածությունների հետևանքով։ Հայերը տեղափոխվում էին ինչպես սահմանակից երկրներ (Վրաստան, Իրան), այնպես էլ Ռուսաստան, Ղրիմ, Լեհաստան, Բալկանյան թերակղզի, Արևմտյան Եվրոպա, Հնդկաստան և այլն։ Այդ գաղթօջախներում հայերը պահպանում էին իրենց կրոնը, լեզուն, կենցաղը և սովորությունները, որոշ տեղերում նույնիսկ ունեին ինքնավարություն և սեփական դատարան։

XI—XII դդ. Անիից մեծ քանակությամբ հայ բնակչություն գաղթեց Վրաստան՝ Թբիլիսի, ապա Գորի և նրա շրջակայքը։ Արդեն վրաց Թամար թագուհու օրոք (XIII դար) հայերը Վրաստանում, հատկապես նրա մայրաքաղաք Թբիլիսիում աչքի ընկնող դեր էին խաղում։ 1251 թ. հայ իշխան Ուսեկը Թբիլիսիում կառուցում է Կաթողիկե եկեղեցին։ Նույն XIII դարում կառուցվեցին Սուրբ Գևորգ եկեղեցին և հայկական Հարանց վանքի տաճարը (երկուսն էլ վերակառուցվեցին XVIII դարում)։ XIX դարում Թբիլիսիում կար 24 հայկական եկեղեցի, որոնց մեծ մասը գմբեթավոր բազիլիկներ էին։

XIV դարի սկզբում հայկական խոշոր համայնք կազմավորվեց Վրաստանում՝ XV դարում ստեղծված կախեթական թագավորության մայրաքաղաք Գրեմիում։ Հայ գաղութը թագավորական դղյակից հարավ-արևմուտք ձգվող մեծ թաղամաս էր զբաղեցնում (մոտ 30 հա)։ Այստեղ կարճ ժամանակամիջոցում կառուցվեցին տասը եկեղեցի, շուկա, իջևանատուն։ Աչքի է ընկնում եռահարկ գմբեթավոր սուրբ Աստվածածին եկեղեցին, որը 1595 թ. կառուցել էր Մկրտիչը (հայերեն արձանագրությունը կրկնված էր թագավորության պաշտոնական լեզուներով ևս՝ վրացերեն և պարսկերեն)։

Անանուր ամրոցում, որը գտնվում է Ռաղմավիրական ճանապարհի վրա, 1688 թ. հայ ճարտարապետները և վարպետները կառուցեցին Մեծ եկեղեցին։ Կառուցման թվականը հայերեն փորագրված է շենքի արևելյան ճակատին, իսկ ճարտարապետի անունը՝ «Գրիգոր», հարավային։ Քվախվրելիի ժայռափոր հայկական վանքը գտնվում է Քուռ գետի աջ ափին, Գորիի մոտ։ Դեպի վանքի Սուրբ Խաչ եկեղեցին տանող միջանցքի պատերին, ինչպես և Գեղարդի վանքում, խաչքարեր են փորագրված XVI—XVII դդ. հայերեն արձանագրություններով։ Վրաստանի հարավ-արևմտյան հայաբնակ շրջանների (Ախալքալակ, Ախալցխա, Բոգդանովկա) եկեղեցիները հիմնականում կառուցված են XIX դարում։ Նրանց շարքում իր ճարտարապետությամբ առանձնանում է Ախալցխայի Սուրբ Վարդան եկեղեցին, որն իր բարձրադիր տեղադրությամբ գերիշխում է ողջ քաղաքի համայնապատկերում։

Հարավային Օսեթիայի մայրաքաղաք Ցխինվալիում XVII դարից գոյություն ուներ հայկական մեծ համայնք։ Քաղաքի կենտրոնում կանգուն է Ս. Աստվածածին հայկական գմբեթավոր եկեղեցին (1718 թ.), որից հարավ գտնվում է երբեմնի հայկական թաղամասը։

Աշխարհագրական առումով Մայր Հայաստանին մոտ գտնվող հայկական գաղթօջախների՝ Վրաստանի, Իրանի, Հյուսիսային Կովկասի, նաև Ղրիմի եկեղեցիները և մոնումենտալ աշխարհիկ շենքերը հորինվածքային և ոճական միասնություն ունեն ազգային ճարտարապետության նմանատիպ կառույցների հետ։ Դա բացատրվում է այդ գաղթօջախների և Հայաստանի սերտ կապերով, որին նպաստում էր նրանց մոտիկությունը։ Իսկ ավելի հեռու երկրների գաղթօջախների ճարտարապետությունն արդեն կրում էր յուրաքանչյուր այդ երկրի շինարարական արվեստի զգալի ազդեցությունը։ Դա վերաբերում է Ռուսաստանի, Բալկանների, Լեհաստանի, Ռումինիայի և Մոլդավիայի, ինչպես նաև Իրանի հայկական գաղութների ճարտարապետությանը։ Տարբեր արվեստների այս սինթեզը մի շարք դեպքերում ստեղծել է ինքնատիպ ճարտարապետական ոճով ստեղծագործություններ։ Օրինակ, Նոր Ջուղայի (Իսպահան) հայկական եկեղեցիների շենքերը զուգակցում են ավանդական հորինվածքները իսլամական արվեստին բնորոշ դեկորի և որոշ ձևերի հետ։ Քրիստոնեական և իսլամական ճարտարապետության այսպիսի սինթեզը, ընդ որում եկեղեցական շենքում, Նոր Ջուղայի հուշարձանները դարձնում է եզակի ողջ Արևելքի ժողովուրդների արվեստում։

Հայերը սկսել են բնակություն հաստատել Հյուսիսային Կովկասում XII դարից սկսած։ Այս աշխարհագրական տարածքը ընդգրկում է Ռուսաստանի Ֆեդերացիայի կազմի մեջ մտնող Կրասնոդարի և Ստավրոպոլի երկրամասերը, Կաբարդինա—Բալկարական, Հյուսիս—Օսական, Չեչենա—Ինգուշական և

Դաղստանի ինքնավար հանրապետություններ։ Հյուսիսային Կովկասում հայ համայնքի գոյության հնագույն փաստը ծագումով Ղրիմեցի՝ «Կաֆացի (այժմյան Թեոդոսիա) ճարտարապետ Խրիտպեյի» կառուցած եկեղեցին է (շինարարական աշխատանքությամբ քարը այժմ պահվում է Վրաստանի պատմության թանգարանում)։ Պատահական չէ ճարտարապետի՝ ծագումով Ղրիմից լինելը, որովհետև Հյուսիսային Կովկաս հայերը, սկսած XII դարից, թափանցել են Ղրիմից։ Իսկ Ղրիմ հայերը գաղթել են XI դարում, հիմնականում Անիից, Բագրատունյաց թագավորության անկումից հետո։ Միջնադարում թերակղզում կար արդեն մոտ 300 000 հայ բնակչություն՝ իր տասնյակ եկեղեցիներով ու վանքերով, կրթական օջախներով։ Հայերի արտագաղթը Ղրիմից սկսվեց XV դարում, երբ այս թերակղզի ներխուժած Օսմանյան Թուրքիան հաստատեց այնտեղ իր տիրապետությունը, և իր գագաթնակետին հասավ XVIII դարում, երբ զանգվածաբար տեղափոխվելով Դոնի դետաբերանը (մեկ անգամից գաղթեց 12600 մարդ), այնտեղ 1779 թ. հիմնեցին նոր նախիջևան քաղաքը, կանոնավոր հատակագծով, երկհարկանի բնակելի և հասարակական շենքերով, վեց եկեղեցիով և Սուրբ Խաչ վանքով։

Հյուսիսային Կովկաս, Ղրիմից բացի, հայերը գաղթեցին նաև Արևելյան Հայաստանից (հիմնականում XVIII դարում)։ Պարսկաստանի և Ռուսաստանի միջև կատարվող առևտրի մենաշնորհը այդ ժամանակաշրջանում գտնվում էր հայերի ձեռքին և առևտրական ճանապարհի վրա գտնվող խոշոր քաղաքներում (Դերբենդ, Ղզլար, Աստրախան և այլն) հայկական մեծ և հարուստ համայնքներ ստեղծվեցին։

Հայ միհիթարիստները Դաղստանում քարոզել են դեռ վաղ միջնադարից։ Հայերի քաղաքական և շինարարական գործունեության վկաներն են Դաղստանի տարածքում (հին Բելենջերում) պեղումներով բացված հնագույն եկեղեցիները, որոնք իրենց ճարտարապետությամբ և քանդակներով առանձնանում են վաղ միջնադարյան հայկական արվեստին, ինչպես նաև լեռներում գտնված խաչքարերի նմուշները։ Պատահական չէ, որ Դաղստանի ժողովուրդները խաչը անվանում են «խանչ», այդ բառը և խաչի հասկացողությունը փոխ առնելով հայերից։ Դաղստանում հայկական տարրը զանգվածաբար շատացավ XVIII դարում, երբ այս երկրամասը միացվեց Ռուսաստանին։ Հայերն այստեղ գաղթեցին Արցախից (Ղարաբաղից) և Շամախի քաղաքից։ XIX դարում կառուցվեցին հայկական Ս. Աստվածածին եկեղեցին՝ հին Դերբենդի կենտրոնում, նրա շուրջը երկհարկանի բնակելի շենքերով հայկական թաղամաս, դպրոց և դրադարան։ Հայկական ճարտարապետությանը բնորոշ լուծումներով եկեղեցին իր խոշոր ծավալով, բարձրադիր դմբեթով Դերբենդի միջնադարյան մասի ուղղաձիգ շեշտն է, կառուցապատման ուրվագծի կարևոր տարրը։ Ղզլարը հիմնվեց ռուսների կողմից 1735 թ., որից անմիջապես հետո այնտեղ հաստատվեցին հայերը։ XIX դարում քաղաքի բնակչության երկու երրորդը հայեր էին՝ իրենց եկեղեցիներով (չեն պահպանվել), առանձին դատարանով, արական և իգական դպրոցներով։

Հյուսիսային Օսիա հայերը գաղթել են XVIII դարում։ Նրանք հիմնականում հաստատվեցին Մոզդոկ և Վլադիկավկազ քաղաքներում։ Մոզդոկում XIX դարում կային երեք՝ խաչաձև գմբեթավոր հորինվածքով Ս. Ստեփանոս (քանդել են 1930-ական թթ.), գերեղմանոցային Ս. Գևորգ և եռագմբեթ փայտաշեն Համբարձման հայկական եկեղեցի։ Իսկ Վլադիկավկազի կենտրոնում կանգուն է խոշոր գմբեթավոր բազիլիկի հորինվածքով աղյուսաշեն Ս. Գրիգոր եկեղեցին, որը մինչև օրս էլ գործում է որպես հայկական եկեղեցի։

Հյուսիսային Կովկասում հայերը ոչ միայն գոյություն ունեցող բնակավայրերում էին հաստատվում, այլև նույնիսկ նոր քաղաք հիմնադրեցին։ Դեռևս XVIII դարում չերքեզների լեռնային աուլներում բնակություն հաստատած հայերը 1839 թ. տեղափոխվեցին հարթավայր և հիմնեցին Արմա-

վիր քաղաքը, որը կոչեցին հին Հայաստանի մայրաքաղաքի անունով։ XIX դարի երկրորդ կեսում, մտնավանդ երկաթուղու անցկացումից հետո, Արմավիրը բուռն զարգացում ապրեց, հայկական բնակչությունը զգալիորեն աճեց Կոստանդնուպոլսից, Տրապիզոնից, Սինոպից գաղթողների հաշվին։ Քաղաքի բնակելի և հասարակական շենքերը կառուցվում էին ռուսական «կլասիցիզմի» ոճով, իսկ եկեղեցիները (Համբարձման, Ս. Գևորգ և գերեզմանոցային) զուգակցում էին հայկական շինարարական արվեստի ավանդական և ռուսական ճարտարապետության ձևերը։

Ես դիտարկեցի հայկական ճարտարապետության պատմության մեջ դեմոգրաֆիկ գործոնի միայն մի կողմը՝ կապված հայերի արտագաղթի, հայկական գաղթօջախների ստեղծման հետ (ընդ որում միայն Կովկասի տարածքում)։ Միաժամանակ կա դեմոգրաֆիկ գործոնի մյուս կողմը՝ կապված տարբեր ժամանակներում Հայաստանում հաստատված այլ ազգերի շինարարական գործունեության հետ։ Հայաստանը նվաճած ժողովուրդներից առաջինը արաբներն էին, որ փոքրաթիվ քանակով և այն էլ պատմական համեմատաբար կարճ ժամանակ հաստատվեցին հայկական քաղաքներում։ Սակայն արաբական տիրապետությունը չզուգակցվեց շինարարական գործունեությամբ, և հայ ճարտարապետության զարգացման ընթացքի վրա արաբները ոչ մի ազդեցություն չունեցան, իսկ այն կարծիքը, թե պայտաձև կամարը հայերին է անցել արաբներից, անհիմն է, որովհետև այդպիսի կամարի օրինակներ Հայաստանում ունենք IV դարից սկսած։ Օրինակ, պայտաձև կամարով որոշակի թվագրված հուշարձաններից են Աղցի Արշակունյաց թագավորների դամբարանը (364 թ.), Տեկորի տաճարը (478—490 թթ.) և այլն։

Հաջորդ՝ սելջուկյան տիրապետությունը արդեն զուգակցվեց փոխազդեցությունների երևույթով։ Սկզբնական շրջանում շինարարական ավանդներ չունեցող սելջուկները, գրավելով Հայաստանն ու Կովկասը, լայնորեն օգտագործում էին տեղի ճարտարապետներին և շինարար վարպետներին։ Այսպես, օրինակ, XIII դարում, ճարտարապետ Կալոյանը Սերաստիայում կառուցեց Գեյուկ մեդրեսեն, Ստեփանի որդի Թագավորը Մալաթիայում՝ սելջուկյան լավագույն մեդրեսեներից մեկը, իսկ Գալուստը՝ Տիվրիկի մզկիթը և Իկոնիայի մեդրեսեն։ Հայ վարպետների կառուցած սելջուկյան դամբարանները աչքի են ընկնում հայկական ազգային ճարտարապետական ձևերի և դեկորի գործադրմամբ, օրինակ՝ եկեղեցիների կամարաշարով զարդարված բազմանիստ թմբուկով։ Սրածայր վեղարով գմբեթի հորինվածքը կիրառվեց Ախլաթի, Ոստանի, Կարինի (Էրզրումի) շրջակայքի XIV դարի «թյուրբեներում» և այլն։

Իր հերթին XIII—XIV դդ. հայկական ճարտարապետության մեջ կիրառվեցին որոշ զարդամոտիվներ, որոնք պայմանավորված էին սելջուկյան տիրապետությամբ՝ դա ստալակտիտներն էին և այսպես կոչված «սելջուկյան շղթան»։ Պատմական Հայաստանի կովկասյան մասի տարածքում սելջուկների կառուցած մոնումենտալ շենքերը խիստ սակավաթիվ են (հիմնականում XII—XIII դդ. դամբարաններ, Նախիջևանի ԻՀ-ի տարածքում)։

Ուշ միջնադարում, երբ Արևելյան Հայաստանը գտնվում էր Սեֆյան Իրանի տիրապետության ներքո, հայ ճարտարապետության մեջ պարզորոշ

նկատվում է պարսկական դեկորատիվ արվեստի որոշ տարրերի ընդօրինակում, որոնք օգտագործվեցին ինչպես աշխարհիկ շենքերի, այնպես էլ եկեղեցիների արտաքին ճակատների և ինտերյերների ձևավորման համար։ Պարսկական ճարտարապետության ազդեցությամբ պետք է բացատրել նաև XVII—XVIII դդ. Հայաստանում, հատկապես Նախիջևանում և Զանգեզուրում, ազյուսի կիրառումը։ Այս երկու գործոնները՝ Իրանի տիրապետությունը և ազյուսի լայն օգտագործումը, հանգեցրին ոչ միայն պարսկական արվեստին բնորոշ դեկորատիվ տարրերի, այլև պարսկական ճարտարապետությանը հատուկ կոնստրուկցիաների՝ սլաքաձև կամարի, ազյուսի թաղի կիրառմանը Արևելյան Հայաստանում։ Վերջինիս վարչական կենտրոն Երևանում XVIII դարում պարսիկները մի շարք մզկիթներ կառուցեցին, որոնցից լավ պահպանվածը և իր ճարտարապետությամբ Կովկասում լավագույնը Գյոյ-մզկիթն է։

Ինչ վերաբերում է Անդրկովկասի պատմական հայկական տարածքում բնակություն հաստատած թուրքական տարրին, ապա նրանք մոնումենտալ ճարտարապետության բնագավառում ունեն միայն սակավաթիվ քանակով մզկիթների (XVIII—XIX դդ.) կառուցման օրինակներ (Նախիջևան, Օրդուբադ, Շուշի)։ Այդ տարի առկայությունը սկզբում բացասական, իսկ ավելի ուշ ողբերգական եղավ նշված վայրերի հայկական ճարտարապետական հուշարձանների դոյության համար։

Դիտարկենք հայկական ճարտարապետական ժառանգության պահպանման մի ուրիշ հարց ևս, կապված գաղափարական հեղաշրջումների հետ։ Դրանցից առաջինը և էականը կատարվեց IV դարի սկզբում, երբ Հայաստանը ընդունեց քրիստոնեությունը։ Ըստ պատմիչների տեղեկությունների, նոր կրոնի տարածումը զուգակցվեց հեթանոսական տաճարների, մոնումենտալ արվեստի բոլոր հուշարձանների (բացառությամբ Գառնիի) անխնայ ոչնչացումով։ Փաստորեն հայ ժողովուրդը մեկ հարվածով զրկվեց իր հազարամյա մշակույթից։ Հայկական ճարտարապետական ժառանգությունը մեծ վնաս կրեց նաև 1930-ական թթ. Խորհրդային Միությունում կատարված այսպես կոչված «կուլտուրական ռևոլյուցիայի» հետևանքով։ Փակվեցին գործող համարյա բոլոր վանքերն ու եկեղեցիները, նրանց մի զգալի մասը քանդվեց։ Եկեղեցիների քանդումը, հիմնականում քաղաքներում, մեծ չափերով կատարվեց առաջին հերթին Ռուսաստանում, ինչպես նաև Կովկասում։ Դա «հիմնավորվում» էր քաղաքների զարգացման, նրանց կառուցապատման պահանջներով, քաղաքաշինական վերակառուցմամբ, նոր մայրուղիների ու հրապարակների ստեղծմամբ։ Երևանում քանդվեցին Պողոս—Պետրոս բազիլիկան (XVII դար), և քաղաքի ամենախոշոր Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին (XIX դար)։ Քանդվեցին նաև Հյուսիսային Կովկասի, Ադրբեջանի, Վրաստանի հայկական շատ եկեղեցիներ։ Պետք է նշել, որ, օրինակ, Թբիլիսիում քանդվեցին միայն հայկական եկեղեցիները (թվով 10), որոնց շարքում XIV դարում հիմնադրված հայկական վանքի համալիրը եռագմբեթ բազիլիկ խոշոր տաճարով, Ս. Հովհաննես Մկրտիչ, Ս. Սարգիս, Ջիգրաշեն, Հրեշտակապետաց, Քամոյան, Խոջիվանքի եկեղեցիները և այլն։

Ինչպես տեսանք, հայկական ճարտարապետությունը հազարամյակներ շարունակ ամենասերտ կերպով կապված է եղել հայ ժողովրդի պատմության

հետ, նրա զարգացման վրա էական ազդեցություն են ունեցել աշխարհագրական գործոնը, գաղափարական հեղաշրջումները, դեմոգրաֆիկ փոփոխությունները։ Հայ ժողովրդի արտադրության հետ նրա ճարտարապետությունը տարածվել է տասնյակ երկրներում, որովհետև հաստատվելով այդ հողում, հայերը առաջին իսկ օրից ձեռնամուխ են եղել եկեղեցի և դպրոց հիմնելուն։ Նրանք աշխատել են պահպանել իրենց արվեստի և ճարտարապետության ավանդական ձևերը որպես ազգային խորհրդանիշներ, որպես ազգապահպանման կարևոր միջոցներ։

АРМЯНСКАЯ АРХИТЕКТУРА И ИСТОРИКО-ГЕОГРАФИЧЕСКИЕ И ДЕМОГРАФИЧЕСКИЕ ФАКТОРЫ

М. М. АСРАТЯН

Резюме

Армянское нагорье с древнейших времен является связующим звеном между Востоком и Западом, что способствовало приобщению армянского народа к культуре эллинистического, а в последующем—христианского мира. Армянское зодчество развивалось в тесной связи с архитектурой соседних стран, что обусловливало их взаимовлияние и взаимообогащение.

ARMENIAN ARCHITECTURE AND HISTORICO-GEOGRAPHICAL AND DEMOGRAPHICAL FACTORS

M. M. HASRATIAN

Summary

Since the ancient times, the Armenian Plateau has served as a link between the East and the West which has facilitated interaction of the Armenian people with the hellenistic culture and later with the Christian world. The Armenian architecture has developed in close connection with the architecture of the neighbouring countries which resulted in mutual influence and enrichment.